

5.3. ՀՀ տարածքի 2004թ. փետրվար ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2004թ. փետրվարին օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-4 աստիճանով:

Հատկապես բարձր ջերմաստիճան է գրանցվել ամսվա առաջին կեսին և երրորդ տասնօրյակի վերջին: Ամսի 8-15-ին և 24-29-ին օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 12-14 աստիճանով: Առավելագույն գերմաստիճան գրանցվել է Արարատյան դաշտում, Տավուշում, Արցախում և Սյունիքի հովիտներում՝ +15 +20°C, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +10 +15°C, լեռնային շրջաններում՝ +3 +8°C: Այդ օրերին առանձին վայրերում առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է վերջին հարյուր տարվա ընթացքում գրանցված բացարձակ առավելագույն արժեքները:

Ցածր ջերմաստիճան դիտվել է փետրվարի 16-19-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 3-6 աստիճանով: Նվազագույն ջերմաստիճան գրանցվել է լեռնային շրջաններում՝ -18 -23°C (Աշոցքում՝ -27°C), Տավուշում, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ -9 -14 °C, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում և Արցախում՝ -3 -8°C:

Ամսական տեղումների քանակը Լոռիում, Տավուշում, Կոտայքում, Գեղարքունիքի, Արագածոտնի լեռնային առանձին շրջաններում, Կապանում կազմել է նորմայի 105-168%-ը, Սևանում և Սիսիանում՝ 213-214%-ը: Արարատյան դաշտում, Շիրակում, Սյունիքի առանձին շրջաններում այն ցածր է եղել նորմայից և կազմել է դրա 27-78%-ը: Տեղումներ դիտվել են փետրվարի 1-5-ին, 11-12-ին, 14-15-ին և 21-23-ին:

Ձյան ծածկի բարձրությունը փետրվարի 29-ի դրությամբ Շիրակում, Կոտայքում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է 45-65 սմ, Լոռիում և Գեղարքունիքում՝ 4-10 սմ (Սևանում՝ 22 սմ), մնացած շրջաններում այն բացակայել է:

Փետրվարի առանձին օրերին հանրապետության տարածքում դիտվել է քամու ուժգնացում, Ապարանում և Ջերմուկում՝ ձնաբուք: Քամու արագությունը հասել է 15-20 մ/վրկ, պոռթկումները՝ 24-25 մ/վրկ: Դիտված ուժեղ քամին առանձին վայրերում վնաս է հասցրել տնտեսությանը: Շիրակում և Արագածոտնի լեռնային շրջաններում կարճ ժամանակով դադարեցվել է ճանապարհատրանսպորտային երթևեկությունը:

Փետրվարի 14-ին Սիսիանում դիտվել է տարվա առաջին ամպրոպը:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են դրանց նորմաների մոտ 90-110%-ը:

Սևանա լճի մակարդակը ամսվա ընթացքում բարձրացել է 2 սմ-ով և 2004թ. փետրվարի 29-ի դրությամբ կազմել է 1897.29 մ, որը 2003թ. նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 47 սմ-ով: Ամսվա վերջին լճի եզրասառույցը հալվել է:

**ՀՀ ազգային վիճակագրական
ծառայության նախագահ**

Ս.Մնացականյան